Նարեկ Սարգսյան

Հիասթափության և հույսի միջանցքում

Հոգնել եմ իմ այս գորշ առօրյայից,

Հոգնել եմ այս անվերջանալի փնտրտուքներից:

Անորոշությունն ինձ խեղդում է,

Կարծես քայլում եմ խավարում՝ առանց ուղղության:

Ապրում եմ մի աշխարհում,

Ուր բոլորը մտածում են միայն

Իրենց անձնական շահի մասին:

Երբ մի հարցով պետք է օգնես,

Քեզ հիշում են, ջերմ խոսքեր ասում,

Իսկ հետո շատ արագ մոռանում

Մինչ նոր անհրաժեշտության ծագումը:

Հասարակությունը գնալով ապականվում է,

Ինչքան չարություն ու կեղծիք ես տեսնում

Սոցիալական ցանցերում և նրանց մեկնաբանություններում,

Փրկություն կարծես թե չկա:

Հիմա մտածում եմ՝ ինչպե՞ս ապրել այս հասարակությունում,

Ուր մարդիկ գնահատում են լոկ դրամը, ունեցած բնակարանը

Եվ թանկարժեք ավտոմեքենան:

Բայց պետք չէ հուսահատվել,

Ամեն ինչ այդքան էլ վատ չէ:

Հավատում եմ՝ դեռ կան մարդիկ,

Ովքեր այլ արժեքների կրող են,

Ովքեր գնահատում են մարդկային որակները,

Բարությունը, անկեղծությունը, այլ ոչ թե Կեղծ

պատեհապաշտությունը:

Խավարի մեջ ես կվառեմ իմ մոմը,

Ու կփնտրեմ իմ համախոհներին,

Որպեսզի համախմբվենք ու միասին

Փորձենք նոր արժեքներ տալ այս հասարակությանը:

Լուծումը միայն համախմբումն է,

Այլ ոչ թե բողոքելն ու իրականությունն անիծելը:

Մայիսի 22, 2025